 կեաց Գեան հէնց Նղիշի իրան նշնելու և պահելու ծախ-  
 քին համար: Թուրքի մուրհակը գրպանը դրեց Եղիշը, պա-  
 հարանի դուռը կողբեց և նորեց անկողին մտաւ: Այն ժամ  
 չետոյ, նա մօրը ձայն տուեց և չաչտնելով թէ չաչից ու  
 տաք խիւրից չետոյ նա ինքնիրան բաւական լաւ է զգում,  
 ցանկութիւն չաչտնեց դաշար երթալու, բայց ճերուի մայ-  
 րը ընդդիմացաւ, ասելով որ որդին դաշտում աշխատելով  
 կտրող է բրտնել, մրսել և չետոյ գուցէ հիւանդութիւնը  
 նորոգուի ու ծանրանայ:

— Բայց տանը մէջ, չ'գիտեմ ինչի սիրտս կ'նեղանայ,  
 կարծես անկողնիս մօտ գալով դեւերը ինձ խեղդել են ու-  
 դում, շարագրեց Նղիշը:

Մայրը խորհուրդ տուեց որդւոյն շորերը հագնել, գիւղը  
 դուրս գնալ և տաք արևի մէջ մանդալ: Պատառը խոտա-  
 ցաւ հէնց առաջիկայ կերակէին գնալ մօտակայ աւերակ  
 սրբի եկեղեցին և այնտեղ մի գոյգ աղանի մատղել, սրդ-  
 ւոյն շար աչքից (պատառը որդւոյն հիւանդութիւնը շար-աչքի  
 աղդեցութեամբ էր մեկնում) պահպանելու համար: Եղիշը  
 ցանկութիւն չաչտնեց այդ մատաղը իրան ձեռքով անել  
 և հէնց աչօր: Մօր սրտին շատ դուր եկաւ որդւոյն առա-  
 ջարկութիւնը, ուստի առանց այլ ևս ուշանալու, Նղիշը տան  
 ձին լծամբեց, ախտի միջի աղանիներեց մի ընդ որոպ  
 ձեռքն առաւ, ձին հեծաւ և հայդէ դէպի Չաչիս: <sup>1)</sup>

— Եղիշ ջան, աշխատիր մինչև երեկոյ տուն դառնաս,  
 բայց եթէ որեւէ պատճառով չ'կարողացար չետ դառնալ,

1) Չլարի ճանապարհի վերայ և այդ գաւառի նտիկին սահ-  
 մանում գտնվում է մի տաճարնակ փոքրիկ գիւղ—Չաչիս անունով, որ-  
 տեղ մի վրացական փառաւոր եկեղեցի կիսակործան մինչև ցարդ կե-  
 նում է: Այդ, ինչպէս և Չաչիսն մօտիկ գտնուող Ծղորխութաւ գիւղի  
 նոյնպէս աւերակ եկեղեցում հայք երբեմն ուխտի են դնում վերջին  
 տարիներում:

աչն ժամանակ մեր բարեկամ Մօլլա-Տուրտունին տանը դի-  
շերես, ուրիշ տուն չ'գնաս, ճախնեց մաշըը սրդուց ետեկց:

— Աա, լա, միամիտ կաց, մաշը, մօր պատասխանեց  
Նդիշը և ձիու սանձը արձակեց:

Ընթերցողը անշուշտ Հատկացաւ թէ Նդիշը ուր էր գնա-  
լու: Մէկ և կէս ժամից Չաչիտի աւերակ եկեղեցուցն մէջ  
աղանձնեցին, և ցոյց դիւղացուց և ապագայի վիպութեան  
Համար, մատղեկից չետոյ, երիտասարդը անցաւ գնաց Սու-  
խարա: Մահմուտ Հասան-օղլին (գիւղի աէլը ալուպէս էր  
կոչվում) գիմաւորեց իրան բարեկամ Աղախիկեց Վեոյի սրդ-  
ուցն, մեծարեց, Հիւրասիրեց և իմանալով որ իրան Հինա-  
ուրց և աղիզ բարեկամ Վեոն կարկտից առաջացած վնասը  
փոխարինելու նպատակով ուղեցել է թուրքի մօտ պա-  
հուած փողեքն մի պատահական լաջող առեւտուրի մէջ կո-  
խել, ճիգ և ջանք արաւ, ձին հեծաւ մօտակայ գիւղերը շըր-  
ջեց և երեք ժամ չետոյ հաղիւ կարողացաւ 350 մանէթ  
ճարել, որ և յանձնեց Նդիշին, պակասորդ 50 մանէթի և  
բոլոր դումարի տոկոսի համար մի ամիս ժամանակ լընդ-  
րելով: Նդիշը 350 մանէթի վճարելու մասին մուրհակի վե-  
րայ տաճկին իրան մահագրել աւելով շնորհակալ եղաւ, հե-  
ծաւ կրկին ձին Վարդախ վերադառնալու: Վեւղացեք դաշտե-  
րից տակաւին չեա չէին դարձել, երբ Նդիշը արգէն Վարդա-  
խումն էր:

Ժէ.

Այդ անցքից մի օր չետոյ, մթնշաղին, վերջապէս Վար-  
դախ հասաւ Մառուկից Քալոն: Մերունին շատ դաղբած և  
վշտացած էր երևում: Աւագը, Վարսենիկը և Նարդիզը դի-  
մաւորեցին իրանց տան պատկասելի նահապետին, մէկըմէ-  
կու ողջունեցին և քաշուեցան դոմի օդան: Բայց մի քանի  
րոպէ չետոյ կին-արմատները, Քալոյի հրամանով, հար-  
կադրուեցան տղամարդիկներին առանձին թողնել և քաշու-  
ել գնալ իրանց բան ու դործին տան մէջ: Վարսենիկն ու  
Նարդիզը դոմի դուռը բացուխու փ արին, բայց առանց դո-

մեց. դուրս գնալու մտերքները առաջ եղները ստուերներում  
թագ կացան: Նրկայն բարակ և աչաբանական չառաջաբա-  
նից չետոյ, որը լսելիս Աւագի սրտի զարկը հեռահեռե  
սաստիկանում էր, ծերունին և վերջոյ իրանց զբաղեցնող  
հարցի վերայ կանգնեց: Նա պատմեց, որ իրան բոլոր ճիգ ու  
ջանքը, խնդիրքը, աղէրսանքն ու պաղատանքն, բարեկամ-  
ները միջոցաւ արած միջնորդութիւնը, բոլորովին և զուր ան-  
ցան խնամի Փիլոսեից մօտ Սուլդալում, թէ նոքա ժեռ  
քարի նման անշարժ և անշողողը իրանց որոշումի մէջ,  
պահանջում էին որ անպատճառ այս տարի, իրանց հախ-  
լուն իրանց յանձնուի: Փետայ Վարդեվանի ծնողքը դանդա-  
տուելով դիւղական կեանքի, նա մանաւանդ ջահիլիների մէջ  
անկանոնութիւնից և ընդհանրացած անպարկեշտութիւնից,  
գրական կերպով ինձ յայտնեցին— շարունակում էր Քալոն,  
թէ նոքա չեն կամենում այլևս մի տարի առանց կնիկ թող-  
նել իրանց տարեքն առած աղաչին, թէ նոքա չեն ցան-  
կանում որ նա, մեր փետայ Վարդեվանը, յուսահատուի և  
անկարող երիտասարդական բուռն կրքերին ողջախոհութեամբ  
ընդվիմանալու, մի օր գուցէ մի այնպիսի ընթացք բռնէ,  
որը ոչ երբէք կարող կ'լինի պատիւ բերել թէ մեր և թէ  
խնամի Փիլոսեից իրանց անուանն ու օջախին:

— Վերջ ամենայնի, ինչք քեզ շատ գլխացաւանք տամ,  
Աւագ, սրդիս, ասաց ծերունին, միակ զիջողութիւնը, որ, ու-  
րեմն զիջանելով կնոջը թախանձանացը, խնամի Փիլոսը խոս-  
տացաւ մեզ անել, այդ այն է, որ մենք Նարդիզին այս տա-  
րի, և հէնց կալուցից չետոյ անմիջապէս, անպատճառ հարս  
ճամբենք, բաժինքի համար պատրաստելով այն, ինչ որ  
կարելի է պատրաստել աղջկայ գլխագրից մնացած պատ-  
րաստի 50 մանէթով, խի մոխուած 200 մանէթը, հան-  
դերձ 40 մանէթ տոկոսովը, հայր ու որդի պարտաւո-  
րուինք, առանձին մուրհակով, խնամոնց իրանց վերադարձ-  
նել մի տարուց զհին: Աւագին շատ ներս առաւ խնամի Փի-  
լոսի վերջին առաջարկութիւնը մանաւանդ: Նա ասաւ: Այդ  
շատ լաւ հաշիւ է խնամի Փիլոսի համար, ես ու իմ Աս-  
տուածն, հայր: Աղջկաւ նա տանի, (կ'ներես հայր յանդգ-

նութեանս) իրան տղի ծոցը տաչ, իրան տան մէջ աշխատեցնէ, իսկ գլխագնի տոկոսը մենք քաշենք, և էլ—որքան էս ճանաչում իմ խնամի Փիլոսին—ողջ վիճակին մէջ ձայն հանէ, թէ ևս աղջկաս տղոր հարս ճամբեցի: Գու թ'նչ տաի, հայր, խնամի Փիլոսի ասածներին, համաձայնեցանք:

— Ի՞նչ ասէի, որդիս, ինքս էլ շատ լաւ հասկանում էի որ նորա ասածները անպատշաճ ու անչարմար բաներ են թէ մեր անուան և թէ մեր գրպանի համար, սակայն որ ուրիշ էլ ճանապարհ չհար: Գու մէկ չես հարցնում, թէ ևս ինչք չորս օր ուշացայ, ի՞նչ նեղութիւններ կրցի, Աւար:

— Ինչք, թ'նչ նեղութիւններ . . .

— Նեղութիւնը այն է, որ սկզբում խնամանց ասածները չընդունեցի, չեսոյ վեր կայաց գնացի Ախալքալաք, Տաթէշ, Տիլիֆ, Նամդարայ ) բոլոր բարեկամներին ու ծանօթներին դուռ ու երթիւքը ձեռնիցի, ինչ է թէ կարողանամ այն անուայ 200 մանէթ փոխառութեամբ ձարել, բայց և զուր, ամէն անգ փողի սով է ընկել կարծես:

— Բարոյակին աւելորդ անգը այդքան ման էս եկել: Ոչ որին տոկոս տալու էս բնաւ միջոց չունիմ և եթէ տուէս պիտի տամ, խնամի Փիլոսին իրան կուտամ, էլ ինչք աչրոց մուննաթը քաշեմ:

— Լաւ է այժմ օտարի մուննաթը քաշել, քան վերջում աղբականին սիրտը կտարել, նորս հետ կուի անել: Գիւղացու բանը ակր էս լաւ ենգիտում, ոչ որդի: Եթէ ժամանակին խնամի Փիլոսին փողը չը կարողացանք չետ դարձնել, այն ժամանակ ոչ թէ երկու գերդատանին մէջ դժգոհութիւն և սրտացաւանք տեղի կուտինան, այլ, որ գլխատուն է, աղջկադ անգ փողը կը բուսի: Այնուհետեւ խնամանք խեղճի ընթից ու բերնից պէտք է բերնի կերածը: Գու այն ասն թէ երանի ևս կարողանայի օտարներին փող ձարել, իսկ տոկոսը ուղէինք, չուղէինք, պէտք է զճարէինք: Ոչ որ երան պարտականութիւնեցը խոյս տալու իրաւունք չունի և ամէն աղին և պարտաճանաչ ծնողքի

) Սուլտանին շատ մտիկ հայ ական զիւղեր:

համար աւելի լաւ է մի փոքր աւելի նեղութիւն կրել, բերանից ու կոկորդից կերածն ու խմածը կտրել, քան աղայ և աղջիկ պատկելու հարցումը, ներկայ և ապագայ վշտերի և փոխադարձ դժտութիւնները տեղիք տալ:

— Խօսքերեցդ պարզ երևում է, հայր, որ խնամի Փիլոսը իրան յատուկ ձարտարութեամբը բերանդ լաւ մեղք է քաշել և իրան անխիղճ պահանջմունքները կատարելու համար բեղանից արդէն խօսք առել, հն, այդպէս է, շուտ ասա, էհ, սիմ, սիմ, Սիմէան, մէկ գլուխ ասա ու պրծի, օրհնամ, էլ թ'նչ էս կմնում:

— Աւագ, է զուր այդքան տաքանում էս: Խնամի Փիլոսին էս հաստատ խօսք չեմ տուել: Վերջին անգամ էս նորան ասացի թէ կը դամ Վարդախ, որդեոյս հետ խորհուրդ կանեմ և մեր երկուքս որոշմունքը առաջիկայ կկրակէին կուգամ Սուլտայ իրան իմաց կմնեմ: Այժմ, որդի, քանի Վարսենիին ու Նարդիլը ներս չեն եկել, եկ քեզ հետ նստենք խորհուրդ անենք:

— Ես խորհուրդ անելու գործ չունիմ, հայր: Ոչ թէ առաջիկայ կկրակէն, այլ ուզում էս հէնց վաղը և եթէ ձեզ հէծեր, գնն Սուլտայ և Փիլոս խնամուն ասա թէ մեր բազարը դուրս չի գալ, թէ այսուհետեւ էս իմ Նարդիլն նորա տղին չեմ տալ, թէ աղջկաս ու Վարդեվանի նշանադրութիւնը էս արդէն քանդամ եմ համարում:

— Ի՞նչ, ի՞նչ . . .

— Ի՞նչ, մինչ չի ուղել, հայր: Ինչնու մինչը այն է, որ Փիլոսը այսուհետեւ իմ խնամին չէ, հասկացանք:

— Լաւ, ասենք թէ թող քո ասածովը լինի:— Ունինք չունինք գեղի մէջ մի լաւ անուն ունինք, այն էլ—ասենք թէ գետնի հաւատար աբինք, սակայն Փիլոս խնամուն փողը, մարդուն 200 մանէթը սրտեղից և թ'նչպէս պէտք է վերադարձնես: Նախ քան չմարաբար խելքիդ դու տալը, լաւ չէ գործի տալն ու վրան, սկիղքն ու վերջը մտածես և ապա խօսես:

— Հարկաւորութիւն չունիմ երկար մտածելու, մարդ օրքան երկար մտածէ, այնքան էլ խորերը կընկնի: Ես աղջը-

կաս չեա կանեմ, իսկ իրան 200 մանէթը Փիլոսը կարողացաւ, գտաւ, թող Հիմի և եթ ստանայ, իսկ եթէ ոչ թող սպասէ, վատտիեմ, կուտամ:—Եթէ նա ինձանից տոկոս է ուզում ստանալ, աչն ժամանակ տոկոսն էլ կուտամ, դորան ոչինչ չունիմ ասելու: Իմացար Հայր, կ'գնաս Սուլդայ, այսպէս կ'ստես, եթէ ուզում ես 240 մանէթի մուրհակն էլ վաղը և եթ պատրաստեմ, տանուտիրոջ վաւերացնել տամ և չանձնեմ քեզ տանես անխիղճ ու անաստուած Փիլոսին տաս, Հոգիներս ազատուի, պոճնենք շան ձեռքից:

— Հայ, Հայ, սա էլ դարձաւ ճիշդ քրթի խամ աշակերտի ասածը թէ մի օրում բուրդը դնեցի, գրեցի, թաղիք շինեցի, ձախկեցի, կարեցի, գլուխս դրի, դնացի նախիրը արածեցի: Այդպիսի դատարի, անմիտ խօսքերով բան չի դուրս գալ, Աւագ, որդի ջան, խելքդ գլուխդ Հաւաքի: Սուլդացի Փիլոսենց ո՞վ և ինչ մարդիկ լինելը դու գեռ չ'գիտես: Նոցա Հետ այդպէս խօսել, այդ տեսակ գործ բռնել չի լինիլ, չետոյ նոքա մեր գլխին այնպիսի կաղեր կ'խաղան որ մէկ գլուխ աչքերս դուրս կ'բացուի:

— Թող ինչ ուզում է անէ Սուլդացի Փիլոսը, թող ինձ վերայ, տանս վերայ կուի գայ, դարնէ, զարկուրի, տեսնենք ո՞վ ո՞ւմ Հախիցը կուգայ: Եստ շատ նա ինձ սպանելու է, եթէ կարաց, ես էլ ջանլամ գլուխը թէ կ'մեռնեմ, լաւ է ես մեռնեմ և ապա նա իրան անխիղճ անէ: Եթէ այս երկրում խիղճ, օրէնք, դատար որ կայ՝ Փիլոսը իրան մտքումը դրածները չէ կարող աւաջ տանել, իսկ եթէ չ'կայ, գլուխը քարը թէ ինձ ն'իան մի դէղէ Սուլդացի Փիլոսի օջախի ձեռքից կընկնի, կոչնչանայ:

— Քանի ժամանակի է վեր, այ տղայ, դու խելքդ կարծես ցնդել ես, գնան, գնան գիշերս պառկիր, անկողնիդ մէջ լաւ մտածիր և ապա առաւօտեան խորհուրդ կանենք: Քստաք արեւուդ էլի գլխիդ է խփել, առ այժմ քեզ Հանդատութիւն է Հարկաւոր, գնան և Հարսին ասան գայ իմ էլ անկողինս պատրաստէ, սաստիկ չոգնած եմ, անտէր ձին ինձ շատ ցնցեց ճանապարհին, ասաւ ծերունին և ոտքի կանդնեցաւ: Վարսենիկը դոմի դուռը բաց ու խուփ արաւ, Նարգ-

դին դուրս ճամբեց և որպէս թէ առանց մի բան իմացած լինելու դոմի օդան ներս մտաւ և սկեսայրի Հրամանով ըսկսեց նորա տեղաշարժ ձգել: Աւագը Հեռացաւ դոմից:

ԺԸ.

Միևնոյն այդ երեկոյն կէս գիշերի մօտ, մինչդեռ ողջ Կարդախը խոր քնի մէջ թաղուած էր, Ծառուկենց տան բաց սրահի մի անկիւնում փսփսալով երկար ժամանակ խօսում էին մէկգմէկու Հետ Նղիշն ու Նարգիդը: Որտեղը, ըստ երևուցիքին, դժուարանում էր երկտասարդի ասածներին Համուրուելու, երկտասարդը աշխատում էր Համուրել: Վերջի վերջոյ մեր սիրահարները կարծես մէկգմէկու Հասկացան, Համաձայնեցան և մի անգամ ևս գրկախառնուելով, մէկգմէկու աչտերից և շրթունքներից ջերմ սիրոյ Համբոյններ քաղելով սուսիկ փուսիկ միմեանցից բաժանուեցան: Նղիշը դէպի կտուրները բարձրացաւ, իսկ Նարգիդը թաթերի վերայ քայլելով կամացուի տան դուռը բաց արաւ, չետոյ փակեց առանց ձայն և ձայտունի աղխեց և մթութեան մէջ ամմեկով իրան անկողինը գտնելով մէջը մտաւ:

Կուտածէգին դէմ, երբ Աւագը զանգակի ձայնը լսելով վերկացաւ և դէպի Աստուծոյ տաճարը շտապեց, Նարգիդը անկողնոյ մէջ շապկանց նստած՝ մօրը Վարսենիկին պատմում է այդ գիշերը իրան տեսած երազը:

— Ձէնց որ աչքերս խփել էի, քաջան, Հաղիւ քունս վրայ էր եկել, մէկ էլ տեսնեմ չորս կողմից սև սև սատանաներ պատեցին: Ամէն մէկը չորս չորս աչք ունէր ճակատին և եօթնական եղջիւր: Պոզերը այնքան երկար էր, որ մեր գութնի ճոպանից տասն անգամ աւելի:...

— Անպիտան աղջիկ, երէկ իրեկուն Հաղար անգամ ասացի թէ գոմից Հեռացիր. ինձ ահանջ չարեր, միացիր, պապիդ ու Հօրդ ասածները լսեցիր, խայալով ու երկիւզով էլ պառկեցար, այդ է, ուրիշ ոչինչ,.... ընդհատեց աղջկաց պատմութիւնը Վարսենիկը և ելաւ շորերը հագնելու:

— Զգիտեմ. բերանները մեծ մեծ բացարած...

—Մի վախել, աղջիկ, մի վախել, վեր կայ մի պուտ  
տառը ջուր խմէ, ասաւ մայրը և շտապեցաւ աղջկան ջուր  
տալ:—Նարգիզը ջուրը խմեց և շարունակեց: Մայրը կշտին  
նստած մնաց:

—Սատանաները մեծ մեծ բերանները բաց արած, շա-  
րունակեց օրերուդը մօր կուրծքին կռթնած, չարձակուեցան  
նախ և առաջ նոր դնած երկու զոյգ եղներին վրայ և խ-  
կոյն կուլ տուին խեղճերին: Վարսենիկը Սուրբացի Ոսկինի  
տուած լուրերը մտաբերելով շիտթուեցաւ:

—Յետոյ ակտուից ելան դոմի օդան, պապիս երեսին  
նստան, շնչապարտ արին և մարմինը ծխներուցին մէջ դը-  
րին ալեցին:

—Գն, աղջիկ, Նարգիզ ջան, երազդ Աստուած բարին  
կատարէ, Ոսկինի սասաները ճիշդ դուրս եկան: Այդ սասա-  
նաները որ ասում ես մեր խնամի Փիլոսոսնք են, որ թէ շուն  
են թէ սատանայ:

—Չգիտեմ. սատանաներից մէկը ծխներուցին մօտ,  
պապի դեակին պահապան թողներով, միւսները թռչուտե-  
լով, թեխմակ խաղալով, այդ ձեր պառկած թնորափի գըլ-  
լեց սողացին վար իջան և քեզ ու հօրս իրանց եղջերներ  
վերայ բարձրացնելով, տարան Գեօրգաղի գլուխը բարձրացրին  
և ուզում էին ցածր գլորել: Երբ ես ճուշտով, կանչուտեցով  
վաղում էի ձեզ օգնութեան մէկ էլ տեսնեմ մի ալ—ձիա-  
ւոր, վրան գլուխը լստի ճերմակ, լուսի մէջ թաթախուած  
քամակիցս ինձ բռնեց—և հրեղէն ձիուն գաւազը առած  
թռաւ ամպերուն մէջ: Հրեղէն ձիաւորին տեսնելիս սատա-  
նաները քեզ ու հօրս խոտոյն բաց թողին լեռան գլխին և  
իրենք անչաչտացան, կարծես մի ըսպէս գետինն անցան:  
Այդ ժամանակ տեսայ պապիս, ողջ առողջ, ձեռքերիցդ բը-  
նած ձեզ դէպի տուն էր առաջնորդում: Կամեցայ գալ  
մօտերդ, բայց չէի կարող, ուզեցայ վերելից ձեր առաջ թըռ-  
չել, բայց չկարողացայ: Ալ—ձիաւորը ձին մարակեց և ես  
չեմ չիշում թէ ինձ հետ թնջ պատահեցաւ, մենք սր կողմը  
գնացինք: Ձեր կոկիծը ինձ շատ առաւ, ուզում էի լալ,  
կանչել, աղաղակել, մէկ էլ տեսնեմ Քեօսիլասի մէջը մի

բարձր աւերակի զլատակներն մէջ կանգնած եմ: Ալ—ձին  
ստբով զլատակի մի բարը գլորեց, մի կողմը ձգեց: Տես-  
նում եմ հողի միջից մի ծրար դուրս եկաւ: Ալ—ձիաւորը  
հրամայեց ինձ վեր առնել այդ ծրարը և բերել ձեզ չանձ-  
նել: Սատանաներուն հախն ու բաժինը տարէք իրանց  
տուէք, ասաց ալ—ձիաւորը, և միւս անգամ նոցա հետ  
գործ մի բռնեք, այդ թէ ոչ հողով մարմնով կրթած էք:

—Յետոյ ծրարը հետդ տուն բերն, Նարգիզ ջան, նայե-  
ցանք թէ միջին կնչ կար հարցրեց մայրը:

—Ոչ չնայեցայ, ուզում էի ծրարը գետնից վերցնել և  
մէկ էլ տեսնեմ արթնացայ: Կրկիւղիցս քեզ մի անդամ ձայն  
տուի որ ինձ ջուր տաս, խմեմ, չլսեցիր. չետոյ երեսս մի  
քանի անգամ խաչ հանելով, անկողնիս մէջ շաւառով խոս-  
տովանիմը՝ ասացի և կրկին խոլուեցայ, բնեցայ: Աբաղաղ-  
ները արգէն կանչում էին: Նարգիզը վերջացուց երազի պատ-  
մութիւնը: Վարսենիկը ալլալուեցաւ, ուրախացաւ, տըխ-  
րեցաւ և վերջապէս մեծ մտատանջութեան մէջ աղջկայ  
կշտից հեռացաւ:

ԺԹ.

Մարդը ներս մտնելիս կենը պատմեց նորան աղջկայ ե-  
րազը: Աւաղը շտապեց հաղորդել այդ բանը հօրը, Գա-  
լօյին: Մեկնեցին, մեկնաբանեցին և որոշեցին, առանց  
ոչ ոքին մի բան տեսնու, գնալ Քեօսիլաս և դանել  
ծրարի տեղը: Աղջկայ պատմածներին մտիկ տալով ծրարը  
լինելու էր ճիշդ այդ քարի կշտին, սրի վրայ մի քանի ժա-  
մանակ առաջ նստած, Աւաղը Խոզաբները ոռոգելու եղա-  
նակներն վրայ էր մտածում:

—Այդ քարի վրայ կանգնած ժամանակս Աստուած  
արտերս կարկուտից տղատեց մի անգամ, ասում էր Աւաղը,  
միւս անգամ երևում է, ուզում է մեր կեանքը զորձանքից  
աղատել Սուրբ Աարդիսը:

—Մեռնեմ հրօշքին, երեւի այդ քարի տակ մի զորատեղ  
տուրը է թաղուած, որ երկու անգամ է ահա մեր նեղ օրին

կհասնի: Երևում է այնտեղ գանձ էլ կայ թաղուած, զրայ երեց Վարսենիկը:

Քուրը միտան կրկին խորհրդի մտան և վերջ և վերջոյ զճռեցին որ Աւագը մենակ, իրեգնապահին, երբ զիւղացիներէ ձեռքն թառաքը դաշտերից կքաշուի, բա՛հը ձեռին գնայ Քեօխմաս և սուրբ Սարգսի ցոյց սուած ծրարը գտնի: Որոշեալ ժամանակին գնաց Աւագը Քեօխմաս և յայտնի քարի կողքին մի երկու անգամ բա՛հը դէմ տուած շտուած և ահա—մի Աստուածային Հրաշք—կաշուի և չի մէջ իսա թաթուած մի թեթե ծրար: Աւագը բաց արտ. երեք Հաբիւր չիսնն մանէթ թուղթ փող: Փողի ծրարը գիւղացին խկոյն ծոցը դրեց, այս և այն կողմ նայեց, քարը ուղղեց և նորա առաջ չքած, գլխաբաց մի երկու անգամ ջերմ հաւատով Աստուծուն ու սուրբ Սարգսին աղօթեց: Վերջացնելով աղօթքը, լճի ակով դէպ ի գիւղ ուղղեց իրան քայլերը:

ի.

Ծառուկենց փոքրիկ գերդաստանը այդ երեկոյնին հոգեկան բերկրութեան ծովի մէջ կատարեալ լողում էր: Ծերունի Գալօջի կամքին թէև հակառակ էր Նարգզի նշանադրութեան քանդելը, բայց երբ ձերունին մտածում էր, որ պահանջողը մինակ որդին, Աւագը, չէր այլ նաև սուրբ Սարգսի պատգամը, Գալօն լռում էր: Միւս կողմից՝ մտմտունքի մէջն էր ձերուկը, թէ երբ 250 մանէթ տանի և խնամի Փիլոսին յանձնէ, չյաջանէ միթէ նորան, թէ ինչտուղեց գտաւ նա այդ փողերը: Նարգզին տեսած երազը հրատարակելը ձեռնառն չէր ոչ միակ այն պատճառով, որ խնամի Փիլոսենց անունը կարատաւորուէր, այլ և գանուած փողի մասին իշխանութիւնը կ'իմանար և ձեռքերեցը կ'իջէր: Վերջապէս կարելի է Քեօխմասի քարի տակ ուրիշ ծրարներ ևս կային, որոնք իշխանութիւնից աւելի Ծառուկենց գերդաստանին էին պատշաճաւոր ձեռք բերելու: Հայր և որդի շատ երկար մտածելուց չետուց, որ ուրեմն զճռեցին իրանց գաղափարը գիւղական տանուտիրոջ յայտնել, այն պայմանաւ որ

նա գանուած փողից 100 մանէթ ինքը վերցնէ, իսկ մնացեալ 250 մանէթը ինքը Փիլոսենց յանձնէ, ձայն հանելով, թէ այդ գումարը Ծառուկենց տանուտէրը ինքն փոխ է տուել: Տանուտէրը ուրախութեամբ համաձայնեցաւ իրան եղած առաջարկութիւններին և Սուլդացի Փիլոսին 250 մանէթ անձամբ յանձնելով Նարգզի և Վարդեմիանի նշանադրութիւնը լուծուած յայտարարեց:

իւ.

Քուրը կարդալցեք մեղադրում էին սուլդացի Փիլոսենց վարձուները գէպի Ծառուկենք և ամէն մարդ ցանկանում էր օրերը Նարգզին համար մի նոր փեսայացու, այնպիսի գրեխաղնով, որով օրերը արքա ծնողը սակարուած չ'լինէին սուժուել և դրամական կողմից: Տանուտէր Մատոն ինքը մանաւանդ շատ ցանկանում էր այդ քաւութիւնը անել Ծառուկենց օջախին և ինքը օրերը Նարգզի համար չաղ մուշտարի էր պառում կարգախում և ուրիշ գեղեցրում: Ծառուկենց օրերը նշանադրութիւնը լուծուած օրերը Ղազիկենց գերդաստանի մէջ արդէն նորից յոյս էր դարձել Նարգզին Նղիշի համար ուղելու: Հասարակական կարծիքի աղբեցութեան, տանուտէր Մատոյի միջնորդութեան և Նղիշի ու սուրա մօր և եղբայրների կողմնակի և անկողմնակի աղջարարութեան տակ Ղազիկենց Գևոն վերջապէս զիջաւ մինչև 250 մանէթով Նարգզի ձեռքը ուղել իրան որդւոյն համար: Գալօն և Աւագ Ծառուկեանները, ինչ ասել կուզի, իսկոյն իրանց համաձայնութիւնը տուին: Գիւղական տանուտէրը կնքահայրութեան հետ նաև իրան օրենական հօր պաշտպանութիւնը խոստացաւ, թէ Ծառուկենց և թէ Ղազիկենց, և դէպս եթէ այդ երկու գերդաստանները օրեէ անակորթութիւնների և գլխացաւանքների հանդիպին երեկից սուլդացի Փիլոսենց կողմից: Նոր-նշնուտիներին պակելու հրամանը անարգել հանելու համար գիւղական քահանան առաջարկեց իրան միջնորդութիւնը տէր գործակատարի առաջ: — Հեշտ է, հոգեւորական իշխանաւորներին կամքը շի-

Ները Հեշտ է, փառք Աստուծոյ, նորա մարմնաւորական լը-  
խանաւորներին նման գժուար սանելի չին, ասաց տանու-  
տէր Մատոն Նարգզի երկրորդ նշանադրութեան օրումը և  
շնորհաւորութեան թար ձեռքն առած՝ սկսաւ իրան անկերջ  
բարեմաղթութիւնները ջահելներէ համար: Այդ եղաւ Յա-  
ռուկէնց տան մէջ, ուր նոր խնամի եղբայրներէ և խնամի  
քոյրերէ մի պատկառելի բազմութիւն հար և ուրիշ Հելերէ  
հետ ուտում, խմում ու ուրախանում էին: Սաղանդար Սիա-  
հին <sup>1)</sup> է պատիւ կնքահայր դաւա-ազային մտնաւանդ, ի-  
րան ճարպիկ մտաներովն ու բանաստեղծութիւններովը, ո-  
րոնք դիւղական աչքը անպատրաստեց է հիւսում, այդ  
օրուայ հանդիսի ծաղիկն էր: Նա թէ սաղ էր ամում, թէ  
երգ չինում ու երգում և թէ միւսնոյն ժամանակ կրթակ  
պարէ մէջտեղում կանգնած, պարողներին ուղղութիւն տա-  
լիս:

Զուգած, դարդարած նորահարսը իրանց մէջ առած՝  
երկու խկ սեռի պարողները, տունն առ տունն խլում էին  
աչքի բերնից ելած բառերը և իրանք կրկնում, որպէսզի Սիա-  
հին նորը շարադրելու միջոց ունենայ: Աշղ Սիահու այդ  
օրուայ շարադրած երգերը նորահարսին և նորասիրտին էին  
նուիրուած այլաբանօրէն ըստ մեծի մասին, ինչպէս էր և  
հետեւեալ «Շորուն» խաղ—պարը:

«Կանանչ արտին քէնէրը <sup>2)</sup>

Աչնտեղ տեսայ իմ եարը

Շորուն, Շողեր, շորուն,

Շորուն, մաղերդ հէրայ:»

Մեր սարեր մշուշ է,

Իմ եարը բէնքլէ դուշ է <sup>3)</sup>

Շորուն, Շողեր, շորուն,

Շորուն, օղերդ երևայ:

<sup>1)</sup> Կարգախի աշղը, Ալէքսանդրապոլցի յայտնի Զիվաննու (Նոյն-  
պէս կարգախիցի) վարպետը:

<sup>2)</sup> Երբը:

<sup>3)</sup> Խալով թռչուն:

Մաղեր ունի խոստալիք  
Թշները Նարգզի—ճաղիկ,  
Շորուն, Շողեր, շորուն,  
Շորուն բողմաղդ <sup>1)</sup> պլպլայ:

Տեղ եմ ձգէ փոթ կուգայ

Իմ եարս հիմի կուգայ,

Շորուն, Շողեր, շորուն,

Շորուն խրխատ <sup>2)</sup> ֆուֆուայ:

Փունջ ծաղիլունանք քաղեցի

Սալթ նարգիկէն հստ առի,

Շորուն, Շողեր, շորուն.

Շորուն, մէսերդ <sup>3)</sup> ճոճուայ:

Կարաւ, կարաւ կքալէ

Կոխած աեղ կ'կանանչէ,

Շորուն, Շողեր, շորուն

Շորուն, դէմքդ թող ըլցս տայ:

Հինդ ու ծալապ խնկոտ է

Իմ նաղլուն նաղխոտ է,

Շորուն, Շողեր, շորուն,

Շորուն, ճիւղ փառփուայ:

Գեօխաղը բարձր լեռէ

Իմ եարս կարագ եղ է,

Շորուն, Շողեր, շորուն.

Շորուն ձձերդ փալփուայ:

Կարկուտը դարկեց արտին,

Գլուխս էր եարիս կուրճքին,

Շորուն, Շողեր, շորուն,

Շորուն, գողնոցդ ալվան տայ <sup>4)</sup>

<sup>1)</sup> Մանեակ:

<sup>2)</sup> Կապայ:

<sup>3)</sup> Մուճակ:

<sup>4)</sup> Գոյն տալ.

Հօրս տունը ու շ թողի  
Սրտովս եւոր ընտրեցի,  
Շորորն, Շողեր, շորորն,  
Շորորն, թէ լիկի է խօսմայ 4)

Սարէն ճորէն ձէնեցին 5)

Եւրս խլել չկրցին

Շորորն, Շողեր, շորորն,

Շորորն, կրծկալը է պուրայ 6)

Գօտին սրմայ արբեշում

Մէջքը կուտայ Հոգմերուն

Շորորն, Շողեր, շորորն,

Շորորն ելլիկի է 7) պուրմայ 8)

Եւրս կայնել երթիքը,

Նարգիզն է խելք ու միտքը

Շորորն, Շողեր, շորորն,

Շորորն, կալցը կուրայ:

Ճղղղգ... կտրեց ջանկարծ Սիահին սաղի ձայնը, վեր դրեց նորան պարտիներն մէջ տեղը և ահա զընդ զինդ, զինդ, զընդ կուպէկանոցները ու երկու երեք-կուպէկանոցներ են, որ ամէն կողմից թափում էին սաղի վրայ:

— Զիվանու, մեր Զիվանու 9) խաղերից, վարպետ Սիահին, ձայնեց գիւղատէր Մատոն օդայի վերե կողմում բաղմամ անդիցը և Փռռռ մի հաս սպիտակ երկու շահանոց նետեց աչքին: Սիահին պարի և երգի եղանակը փոխեց: Սիտուեց Բայազէզի ճօշ— պարը:

4) Գեղեցիկ, սիրուն. 5) ձայնել. 6) սրուսայի կտոր. 7) բաձկն. 8) սլորուն:

9) Պ. Զիվանին ժամանակ առ ժամանակ այցելելով իրան հայրենիք կարգախ գիւղին, այդտեղ միշտ այս և այն երգը յիշատակ է թողնում: Իսկ թէ Զիվանու երգերը միշտ հայելար են, այդ ամէն մարդ զինէ: Շատ անգամ որ մեր գրականութիւնը մինչև այսօր բազմ չունի պարոնի երգերի հաւաքածուն տպագրուած տեսնելու:

ԻԲ.

Պատահել է քեզ տեսնել, ընթերցող, մըջիւններին, որոնք ահագին բանակութեամբ վխտում են մի արտի միջին, մի թմբի գլխին: Այդ փոքրիկ, աշխատասէր կենդանիներից ոմանք մի մի հունդ շարակած անբտնբալով տանում են իրանց ստորերկրից բոցնը, ոմանք ցորեն կամ գարու քիտով բեռնաւորուած, կարծես թէ միասին մի ծանր գութանում լծուած արիւն բարինք մտնելով, շտապում են դէպի մի այլ ծախ: Այստեղ մի մըջին միսի բերնից սրբը խլել է ուղում, այնտեղ մըջիւնների բանակը իրանց թշնամի բոռի դէմ պատերազմ է մղում:

Ճիշդ այդպէս է, ընթերցող, գիւղական կեանքը կարցի ժամանակ: Զառամեալ ձերերից սկսած մինչև երեք չորս տարեկան երեխան կալերի մէջ գործում է: Մինը կամ է բշում, միւսը կալը շուռ տալիս, երկրորդը ձեռուած օրանը էրնում, չորրորդը թէճ անում: Սա մաղում է, նա ծանծը քարմաղում, ուրիշները կալաքաշում և հալում 1): Յանկարծ ամպերը թխպեցին, գիւղացին ամէն բան թողած շտապում է կալը միմխոյն ժողովել և իրան այդչափ դառը քրտինքով ձեռք բերած մի քանի սօմառ հաց—հատիկները պահել պատուպարել իրան թշմանի աշխանային անձրեկից: Գարարում է անձրեք, մի քանի ժամ, մի երկու օր յետոյ չորանում է գետինը և նոր մէկանց փռուում են կալերը: Հակառակ հողմը վիչեց, գիւղացու մոխը մարեց: Յուսահատուած տղամարդը ձեռքից վաչը է ձգում իրան թին ու եղանը, իսկ կին արմատը ձեռքից մաղը: Երկայն թէճը շուռ տալ քամու ուղղութեամբը նոր մէկանց դարստակ դժար է, սովորութիւն չէ, մանաւանդ որ քամու փչումաճքներին և կարբիղներին հաւատ ընծայել կարելի չէ, ուտաի գիւղացին շտապում է սալը լծել, դաշար վաղել և այնտեղ մնացած օրանների խրճերը տուն բերել: Վա, վու, աղաղակում է

1) Կալաքաշ և հալ ձեռուած կալը ժողովելու գործիքներ են:

մօր կուրծքին կպած ծծկեր երեկան և չէ թող տալիս որ մանկահասակ կենը արդէն իտակած հաց—հատիկները չափէ, ջվալները մէջն ամէ, կամ մաքրած թէճի գլխին կանգնող և հաց—հատիկները անող անող եղինքին ու գոմէշներին ճիւղտէ, հեռացնէ: Մանկահասակ կնկայ կշտին, մօտակայ կալն մէջ, այդ մարդիկ, պառաւ կնանիք կան, ուստի կինը չէ կարող ճաշնով հեռացնել թէճն ուտող աներես կենդանիներին: Նա, մանկահասակ կինը, շատերի հետ տակաւին հարսնութիւն է անում, նա զեռ չխօսքան է: Այս կալին, այն կալին օրանը արդէն ձեռնած վերջացած է, բլրակն այն ցորենը կամ դարին դարսած է և ահա ամէն տեղից թափվում են, հացհատիկն բլրակն շուրջը բոլորվում, կապալառուի սուբալները, իրանց հասանելի տառանդողը չափելու, քահանան և ժամկոչը իրանց տարեհալը <sup>1)</sup> ստանալու, անկուշտ բողբոջանը իրան հին հաշիւները մաքրելու, գիւղի գլխը, հովիւը, չառուը, իրանց մաս ու բաժինը ջվելու, աղքատն ու տնանկը, թէ գիւղականը և թէ օտարականը, իրան սղորմութիւնը առնելու, մուրացիանը վղից կախ արած տուրակը լեցնելու: Ամբողջ հացաբլուրը վերջացաւ, հաղիւ մի սօմառ, կէս սօմառ մի քանի կտտ բան մնաց ահագին թէճից: Նոր նոր թէճեր են պատրաստում, հացհատիկներն նորանոր բլրակներ կանգնվում այս ու այն կալն մէջ: Մէկ էլ տեսնում ես, յոխորտ յոխորտ քայլերով վրայ է հասնում գիւղի իւղբաշին և հարիւրն է ուզում: Ահա, ահա, շղթան վղի վրայ փառփռաւորով, ձեռքն մըտրակը ճօճելով, չառուն ետքնն ունենալով ծանր, աղաւառն գալիս է և տանուտէրը «գիւղին պարաքը, գիւղի վրայ եկած տուղանքներն ու սուտեպնի խղտերժբաները, վաճը» թէճի ակրոջ յուշ է ամում օրինապահ տանուտէրը, և գաւառապետի կրկնողական խիտ հրամանադիրներին ստացած օրերն ու համարները թուում և չետոյ անցնում, գնում դէպի միւս կողմը, միւս թէճը: Հաղիւ տանուտէրը հեռացաւ,

<sup>1)</sup> Ամէն մի հօդի, ծծկեր երեկայիցը սկսեալ, քահանային <sup>1/2</sup> կտտ ցորեն են տալիս գիւղացիք: Նա է տարեհալը:

մօտեցաւ գիւղի ամբարտաքը «չափէ, շուտ չափէ ամբարտեցին <sup>1)</sup> հացերը» և ինքն կտտն առաւ, թէճի գլխին չափեցաւ:

Արովհետեւ իմ վէպի տարին Կարդախի ցանքերը կարկտից մեծ հարուածներ էին կրել, ընթերցող, ուստի կալուցի ժամանակ սովորական եռանդն ու գործունէութիւնը չէր տեսնվում կալերում: Վերջիջիտ բազմատեսակ տուրքերի ժողովին էլ մեծամեծ նեղութիւններով և շատ դանդաղ առաջ էր գնում առհասարակ: Հաց—հատիկների թէճեր կնքել, կենդանիներ գրտուել ծախել, մարդկանց բանտարկել, ձեռքէլ, բաշքէլ ու հայհոյել գրեթէ առօրեայ երեւթներ էին, ընթերցող, այդ տարին Կարդախում: Ժողովրդի գրութիւնը շատ չուսահաստիան էր: Էլի լաւ էր որ գիւղի միւս սղորմուտէրները, քաղաքացի հին և նոր կապալառուներ, կառավարելներ, գիւղացուց տեղակ այս և այն դատարանին, այս և այն դործին համար երաշխաւորողներ, իրանց մեծամեծ և բազմատեսակ պահանջներով ու ծայրահեղ տակոններով այդ տարին առաջ չէին գալիս, այլ իբր թէ գիւղացիներին կարելիցելով շտապում էին իրանց մօրհակներ և գաշնքներն պայմանաժամանակը մեկերկու տարով ևս չետաձգել, չը մտանալով, ի հարկէ, սովորական տարաները և վրադիրները վրայ գալու:

ԻՊ.

Օրիորդ Նարգիս Երազը մասուկենց օղջ գերզաստանը

<sup>1)</sup> Իշխանութեան հրամանով գիւղերում հասարակաց ամբարանոցներ կան, որն օղտակարութեան մասին խօսելը աւելորդ է: Բայց, եթէ մի կողմ թողնենք մասնաւոր բացառութիւնները, այդ ամբարանոցներում ժողովում բարին իրան նպատակին չի ծառայել, այլ մասնաւոր անձինքներին կամայականութեան և անձնական շահերին է զոհուում: Այդ է պատճառը, որ առանց դժուարութեան, սովորաբար, ոչ առանց բանութեան, չէ կարելի ժողովել գիւղերում հասարակաց ամբարանոցի պահեստները: Նոյն խի ամբարին «Թաղապետական ամբար» են անուանում գիւղացիք, և ինչպէս մի արքունի տուրք վճարում հայր:

կատարեալ փրկեց: Քեօսիասի փլատակներն մեծից, աստուածային Հրաշքով, գտած ծրարով, Աւագը ոչ մեկն Սուլդացի Փիլոսենց պարտքը տուեց,—ասել է թէ նոցա փողով գնած երկու զոյգ եզները իրան վաստակ մնաց—ոչ մեմկայն գեղական տանտիրոջ մտերիմ բարեկամութիւնը գրաւեց, այլ և 100 մանէթ էլ կանխելի փող իրան համար չեա ձգեց: Այդ գումարը Մառուիկենց գերդատարնի համար շատ հերիք էր թէ իրանց հարկերը անտարտանջ վճարելու, և թէ միւս պարտքերի մի մասը հատուցանելու: Ինչ որ վերաբերում էր գերդատարնի ձմեռուայ պաշարին և առաջիկայ տարուայ սերմնացուին—այդ ամէնը Խողաբինի արտերի բերքովը կարող էր հոգալ Մառուիկենց Աւագը: Այսպէսով, եթէ կարգախում այդ տարուանը կային մի քանի բաղդաւոր տներ, նոցանից մէկն էլ, եթէ ոչ առաջինը, Մառուիկենց տունն էր: Որք գերդատարնը բաղդաւորեցնող օրերը Նարգիզը ևս չէր կարող իրան բաղդից դժգոհ լինել, որովհետև նա էլ վերջապէս իրան սիրած ու պաշտած Նղիշին հարմնացուն էր դարձել և զիւրի տանտիրոջ նման աղա մարդն էլ խաչեղ բայր ունենալու պատուոյն արժանացել:

Մառուիկենց օջախի գլխով անցած այս բաղդաւոր փոփոխութիւնները ընթերցողը ինքն արդէն տեսաւ, բայց նա չտեսաւ և չգիտէ թէ Ղազիկենց Քեօն մը գումարեց վճարեց Նարգիզին 250 մանէթ գլխապէնը: Եթէ չեղում էս, ընթերցող, Նղիշ Ղազիկեանը առաջին նուագում Սուխարացի թուրքից, իրան հօր պահանջից սասցած 350 մանէթը,—որը չեայ, իրան ազջկայ երազովը Աւագը Քեօսիասի փլատակներն տակից գտաւ—տանաւ ին մնացորդ 50 մանէթի և բոլոր մաքր գումարն տոկոսի համար մէկ ամիս ժամանակ տուեց տաճիկ պարտապանին: Հէնց որ Ղազիկենց Քեօն հանգամանքներից ու թախանձանքներից սակալուած վերջապէս համաձայնեցաւ 250 մանէթ գլխապէսով օրերը Նարգիզին իրան աղային ուզել, Նղիշը արախութիւնիցը, ինչպէս ասում էին նորա աղականներն, խենթացած, հօր ձեռքից բանալին խլեց, թղթերի պահարանը բաց արաւ և Մահմուտ Հասան-օղլու 400 մանէթանոց պարտամուրհակը

առնելով, թուա ձիու վրայ և երկրորդ անգամ հալած դէպի Սուխարա: Հասնելով այնտեղ, Նղիշը հօր պարտապանի հետ հաշիւ տեսաւ 50 մանէթ մաքր-գումարի մնացորդը և 160 մանէթ, մէկուկէս տարուայ տոկոսը, ընդամէնը, 210 մանէթ ստացաւ, բայց տաճիկ պարտամուրհակը չվերագարձրեց, պատճառաբանելով թէ ճանապարհին կորցրել է: Պարտամուրհակի փոխարէն Ղազիկենց Նղիշը բուրս գումարի և տոկոսի ստացման մասին առաջարկեց իրան ստորագրութեամբ, բաթալլամայ, որը եթէ Հասան-օղլին կամենում էր, կարող էր չետոյ փոխարկել Նղիշի հօր ստորագրութեամբ մի նոր բաթալլամայի: Տաճիկը համաձայնեցաւ: Նղիշը Սուխարացում գիշերելով, հեռուէտլ տուտարը վերադարձաւ Կարզախ: 210 մանէթի հետ ներկայացնելով հօրը Հասան-օղլու պարտամուրհակը, երեսասարքը Հասան-օղլու կողմից ներողութիւն խնդրեց հօրիցը, նորա համար իբր թէ տաճիկ պարտապանը առ ձեռն պատրաստի փող չունենալով չէր կարողացած իրան պարտքը ամբողջապէս վճարել առ այժմ, թէ նա, Հասան-օղլին եթէ սիրան աղիւղ բարեկամից՝ մի երկու շաբաթ առաջ նախազգուշացած լինէր, այժմ իրան բարեկամի մօտ այսպէս սեկեկա չէր դուրս գալ, թէ վերջապէս մնացեալ գումարը, անհատովը միասին, Հասան-օղլին կաշխատի մի ամսից չետոյ, եթէ ոչ առեւել շուտ, անպատճառ անձամբ անձին Կարզախ բերել: Պարտապանի պատճառաբանութիւններին մեկնգամայն իրաւունք տալով, Ղազիկենց Քեօն Նղիշին ձեռքից աւաւ Հասան-օղլու պարտամուրհակը, իրան անհասկանալի լեզուով եզած նախկին մակագրութիւնը, որ Նղիշի ասութեամբ իբր թէ միմեկն 210 մանէթի վճարման մասին էր, տեսաւ և մուրհակը պահեց: Այդ գումարին վրայ առեւայնելով նաև ուրելիներիցը փոխ առած 40 մանէթը, Ղազիկենց Քեօն իրանց ախոռում մեծ գոմշի փոքի տակից <sup>1)</sup> ձեռն առ ձեռն 250

<sup>1)</sup> Գլխապէնը գիւղացիներն միջից ջնջելու համար շատ փորձեր է եղած մեր հոգեւոր իշխանութեան կողմից, բայց միշտ անյաջող: Մատթոս կաթողիկոսը մի կոնդակով մինչև անգամ անէք է կարգա-

մանէթ չանձնեց Յառուկենց Գալոյնն: Այդ օրուայ Հէնց  
Հեռեկալ օրն էր, ընթերցող, որ մենք պատահեցանք Յա-  
ռուկենց տան մէջ եղած Նարգիզի Հարսնակունն և աչղ  
Սիահառ շարըր — պարին<sup>1</sup>:

ԻԿ.

Վարցըր սոփորականից շուտ վերջացաւ, սրովհետեւ  
կարկտի պատճառով Վարդախի ցանքսերից մեծ մասը փչա-  
ցած էր և ոչ քաղվում, ոչ էլ ձեծվում: Նղիշի և Նարգ-  
զի պատկազրութեան օրերը մօտեցած լինելով, Ղադիկինք  
և Ծառուկենք Հարսանիքի պատրաստութիւններ էին տես-  
նում: Սուլդացի Փելոսնից կողմից, բարեբաղդաբար, ձայն  
ու ձգտուն չը կար: Այդ Հանդամանքը ոմանք վերա-  
դրում էին Փելոսնից խղճահարուկուն, և փռմանուկուն  
իրանց առաջուան վարմունքից, ձեր Գալոյնն արած  
ամարցի առաջաբերութիւններն, — որոնք Փելոսնից խոր  
լուսթիւնը մեկնում էին մի այլ չար ցանկութեամբ — Նարգզին  
փախցնելուն, այլք թէ վիճակի տէր գործադատարին իրան  
ձեռքում ունենալով սուլդացի Փելոսը Նղիշի և Նարգզի պատ-  
կուելուն արգելք կ'ընենար և վերջ 'ի վերջոյ իրան տղա-  
չին Հախլու — նշանածը ինքը Հարս կ'տանէր: Բայց այդ բո-  
լոր խոհրդածութիւնները Հերբում, ջրում էր գեղախան տա-  
նուտէրը և իրան անուն ու վրէ շղթայովը կերգուեր, թէ  
իրան քանդածը քանդած, կապածը կապած է, և թէ սուլ-  
դացի Փելոսը, թէգուզ թեւաւոր թույուն էլ գառնայ, էլի  
չէ կարող օրիորդ Նարգզին փախցնել Վարդախից, մանաւանդ  
երբ Փելոսը արդէն գեռէ որ օրիորդի խաչեղբայրը գլաւա-  
աղան ինքն է: Ինչ որ վերաբերում է տէր գործադատարին,  
ասում էր Հպարտութեամբ տանուտէրը, նորա սիրտը շահե-  
լուց Հեշտ բան չ'կայ: Եթէ սուլդացի Փելոսը գործադատա-  
րին 5 մանէթ տուեց, ևս կուտամ 10, 15, 20: Փառք Աս-

ցել գեղաղցնելի վերայ, բայց գորանով էլ այդ վատ սոփորութիւնը  
չէ վերայել: Ի վերայ այդ ամենայնի հայրապետական անէքից ազատ  
մնալու համար, գեղաղցե այժմ գլխաղինը գորշի փոքի տակոյն ևն  
վճարում աղջկայ տերօջը:

տուճոյ, մեր գործադատարը և առհասարակ Հոգեւոր իշխա-  
նաւորները, ոչ թո՛ւ ունին, ոչ թ՛փանք, ոչ ոյժ, ոչ էլ դօռ,  
դուաթ<sup>1</sup>), մերոնց բուռը ինչ էլ որ դնես, «Աստուած խէրու-  
բարագաթ տալ» կ'սան և յե՛տ կ'հանգնեն: Այն ամէնը դի-  
տենալով Հանդերձ, տանուտէր Մատոն, իրան չաւուշին,  
գեղի գզիւնն, եղբաշուն խնա Հրահանգներ էր աուել, օ-  
րիորդ Նարգզի Հարսանիքի օրերումը ամենաջն արթնու-  
թեամբ Հսկել Ծառուկենց և Ղադիկենց տան և Սուլդացի  
ճանապարհները վերայ:

ԻԵ.

Կերած, խմած, քեֆերը քօք արած, երգի, և աչղ  
Սիահառ սաղի թըթուն շարերի սաղեցութեան տակ՝  
Ծառուկենց Հարսնակունները կտուրի վերայ Քեօռ-օղ-  
լու պարն էին թռչտում, պարզեկայ լուսնի տակ,  
երբ Քեօռ-օղլու սարի կողքից մի խումբ գննուած ձիա-  
ւորներ յանկարծական գրոհ տուին պարողների վերայ: Կնա-  
նիք կտուրից լեղապատառ տուն թափուեցան, տղամարդիկ  
սալլի ցիցերով և գերաններով գնմազրեցին ձիաւորներին:  
Սկսեցաւ կատաղի կռիւր: Ահագին ճիւ ու կանչերից, հա-  
րուածներից ողջ Վարդախը ոտքի կանգնեցաւ: Ճանուտէր  
Մատոյին անհնարին եղաւ արթնացնել: Նա սաստիկ հար-  
բոտած Ղադիկենց գոմի մի անկիւնում խորթում ու խուկում  
էր: Գեղի եղբաշուն, գզիւնն ու չաւուշը, այն էլ առանց  
զէնքի, ինչ կարող էին անել, մանաւանդ երբ գլաւա-  
աղան իրանց գլխին կանգնած չէր և Հրամաններ չէր որո-  
տում: Մենչեւո կտուրի վրայ սկսուած կռիւը հետզհետէ  
ահեղ կերպարանք էր ստանում, ընթերցող, և չորացած ու  
տափկացած հողը կարմիր արեւնով ներկում, ձիաւորներից  
երկու հոգի մերկ սուրերով Ծառուկենց տուն մտան և ա-  
ռանց կին-արմատի լացութացի դուռում գոչումներին

1) Սախմուհը, ոյժ:

ուչք դարձնելու, օրհորդ Նարգզին գարու ամբարի մեջից  
Հանեցին, քաշուքաշ մինչև դրսի գուռը տարան: Իրան ա-  
ռաջ կանգնած չորս ձիաւորներից մինը դրեց օրհորդին ձիու  
գաւաին առաւ և ուղառաղէն ընկերների պահպանութեան  
տակ Սուլդայի ճանապարհը բռնեց:

— Տարան, Հարսին տարան, մե լանկարծական ճաչն  
փրթաւ Ծառուկենց տան միջից, գելդի կտուրներեց, և ա-  
մէն կազմեց: Այդ ահէղ ճաչնին մի զել ու սուլուլի սուլոյց  
չաջորդեց Քեռ-օղու սարի կշտից: Ծառուկենց կտուրի  
կուրը վերջացաւ: Գեռ մինչև այդ ժամանակ գելդում մը-  
նացած ձիաւորները, առանց այդ և ահէակ նաչելու, աթար-  
ները բուրգերը շքելով, գերանները և չարդերը զէջերը վրա-  
չեց Թուլտաւելով, շտապում էին Սուլդայի ճանապարհի վե-  
րայ ընկնել: Վհատեցուցիչ լուութիւնը տիրեց Կարդախում:

— Եղիշո, ուր է Եղիշո, մարդկանց իրարանցումի ժամա-  
նակ անդադար հարցնում էր սորան, նորան, Եղիշն պառաւ  
մայրը:

— Իւղբաշի, չաւուշ, գղիւր, ծօ, ուր էք կորել, դուռ  
դրկից էշի նման կտուրներում Քնչ շարուած մնում էք, Կա-  
ղիկենց կտուրում ստքի վերայ գլտորտելով, աղաղակում էր  
տանուտէր Մատօն, ծօ Խաւէտ <sup>1)</sup> մէկ ձիաւոր Հանեցէք,  
հը, շուտ, գրազրիս իմաց արէք թող գայ շուտով նաչալ-  
նիկին ռաբօրթ գրէ, հը, էշի նման բերանները բացարած  
էլի կանգնած են, ծօ ինչի էք կանգնել, գլալինին <sup>2)</sup>  
խօսքը չէք ուղում լսել մեթէ, հա, ծօ ձի տալու օղեալ <sup>3)</sup>  
մումն է:

ԻՊ.

Օրհորդ Նարգզին փախցնողները Բեղաշէն աւերակի քաչ-  
քաչուած եկեղեցույ կշտին կանգ առան՝ շունչ քաշելու,

<sup>1)</sup> Կարդախի մտ մի գելդ:  
<sup>2)</sup> Գլալա-տանուտէր:  
<sup>3)</sup> Հերթ—Очередь.

ձիերին հանդոտացնելու: Ձիաւորները մի առանձին հար-  
տու թեամբ մէջմէկու պատմում էին իրանց գործած քա-  
ջութիւնները Կարդախում, ոմանք էլ գանդատում էին մար-  
միրների աչս և այն մասի վերայ ստացած հարուածների և  
վէրքերի սատակ նեղացնելուցը: Կաչին և աչնալիներ, ու-  
րանք այլ ևս ձի նստել չէին կարողանում: Ձիաւորները ըն-  
դամէնը 24 հոգի էին: Սուլդայի Փիլոսենց Կարդեվանը,  
առանց խտաղներին ուչք գարձնելու, Նարգզին դատելով  
էր զբաղած: Չնայելով երեսասարդի փաչփայանք ու շոյ-  
շոյանքներին ևսիուհըայի մէջ կուճ եկած օրհորդը բերա-  
նը չէր բաց անում մի որեւէ պատասխան տալու:

ԲՆՊՊՊ..... աւերակ եկեղեցույ միջից չանկարծ հրացա-  
նի մի գնդակ Կարդեվանի գլխի մագերը խանձոտելով, ան-  
ցաւ նորա ձիուն դեպու: Ձին խոխոն գետին տապալուց:  
Օրհորդը ճչաց և ուշաթափ վաչը ընկաւ նստած տեղեցը:  
Երկրորդ գնտաղը գեռ հրացանի բերանից դուրս չէր թուել,  
երբ աւերակ եկեղեցույ մէջ Եղիշը սուրի երկու հարուած  
ստացաւ, իրան վերայ թափաղներեցը: Վէրքերը թէև մա-  
հացու չէին, բայց Եղիշը այլևս անկարող էր ստքի կանգնել:  
Նարգզիւր թէպէտ Կարդեվանի գաւակումն է հեծցրած կըր-  
կին, բայց ձիաւորներից երկուսը կողքերեց բռնած ունէին  
ուշաթափ զսՀին:

ԻԿ.

Այս անցքից մե շարաթ չետոյ՝ Սուլդայի եկեղեցում  
գելդի քահանան պառիկեց օրհորդ Նարգզին Փիլոսենց Կար-  
դեվանի հետ,—իսկ Ղաղիկենց Եղիշը վեց ամսուայ ծանր  
հեւանդութիւնեց չետոյ վերջապէս անկողնեց վեր կացաւ:  
Նորա խարդախութիւնը, Սուխարացի Մահմադ Հասան-օղ-  
լու պարտամուրհակի վերաբերութեամբ, արդէն չաչտնուած  
էր և շատերի հետ Ղաղիկենց Գալսն էլ առուամօթում խեղ-  
դուած աչքից ու սրտից բոլորովին ձգել էր Եղիշ սրդուոյն:  
Վկաների ցուցմունքով, գելդական դատաւորների առաջ, ա-

պացուցանելով որ Սուլդացի Փելոսենց արուած 250 մանէթը  
ինքը փոխարինարար է տուել տանուաէր Մատօն, անդադար  
ստիպում էր Յառուկենց Գալօին ու Աւազին շուտ վճա-  
րել իրան այդ գումարը, կամ գոնեա մի տարի ժամանա-  
կով առանց տոկոսի, մուրհակ տալ. այս թէ ոչ, ծածուկ  
միշտ սպառնում էր Գալօին ու Աւազին գելեղական տանու-  
աէրը, Քեօխվասի գործը ռարօրթով նաչալնիկին իմաց կա-  
նեմ և ձեզ տնով տեղով սիրելիական անել կ'ուտամ:

Ի՞նչ.

—Տեսնում ես, սրբի. մի օր ասում էր Գալօն Աւազին,  
տեսնում ես թէ քո մեղատեղի կուրբերն ու մաքերն մեզ  
ինչ վիճակի Հասցրին:

—Գուն էլ տեսնում ես, Հանր, պատասխանեց Աւազը,  
թէ արագի բերած նշանն ու թոռանդ տեսած երազը մեզ  
մնց չիմարացրին:



Ղինն է 20 կողէկ.

Перепечатана изъ газеты „Ардаганъ“ № 35, 36, 37 38, 39.

Типографія П. Мартиросіанца. Орбеліан. ул., 5

4910

2013

